ՀՏԴ 371.31: 809.198.1 Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

Ծովինար Հասրաթյան,
Ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոս
E mail tsovinar-asratyan@mail.ru

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ («ՄԱՅՐԵՆԻ 6»)

Սույն հոդվածում քննվում են պատկերավորման մի շարք միջոցներ, որոնք մեծապես նպաստում են աշակերտի բառապաշարի հարստացմանը, պատկերավոր խոսքի զարգացմանը, պատկերավոր մտածողությանը: Քննարկման նյութ ենք դարձրել պատկերավորման միջոցներից մակդիրի, փոխաբերության, համեմատության ուսուցումը և դրանց գործածության կարևորությունը խոսքում: Վերջիններս ավելի տպավորիչ են դարձնում խոսքը:Բնագրային օրինակները և թեմատիկ բառախումբը ընտրված են 6-րդ դասարանի մայրենիի դասագրքից, քանի որ միջին դպրոցի աշակերտները պատկերավորման միջոցներն ուսումնասիրում են հենց այդ դասարանից սկսած:

Բանալի բառեր – պատկերավոր խոսք, գրականություն, ուսուցում, մեթոդիկա, մեթոդ, դասագիրք, պատկերավորման միջոցներ, բառերի բացատրություն, միջառարկայական կապ, քերականական գիտելիքներ, բառապաշարի հարստացում, մակդիր, փոխաբերություն, համեմատություն, ծրագրային նյութ, «Մայրենի 6»:

Цовинар Асратян,
Кафедра армянского языка имени Ак. С.Абраамяна, старший преподаватель
E –mail: tsovinar-asratyan@mail.ru

ИЗОБРАЗИТЕЛЬНЫЕ СРЕДСТВА КАК СРЕДСТВО ОБОГАЩЕНИЯ ЛЕКСИКИ (СЛОВАРНОГО ЗАПАСА)

В данной статье рассматриваются изобразительные средства речи, которые значительно способствуют обогащению словарного запаса ученика, развитию образной речи, образного мышления. Из изобразительных средств предметом обсуждения стали обучение эпитета, метафоры, сравнения и важность их использования в речи. Последнее делает речь более впечатляющим. Примеры и группа слов выбраны из учебника 6-го класса по родному языку, так как в средней школе изучение изобразительных средств начинается с данного класса.

Ключевые слова – образная речь, литература, обучение, методика, метод, учебник, изобразительные средства языка, объяснение слов, межпредметная связь, грамматические знания, обогащение лексикона, эпитет, метафора, сравнения, программный материал, родной язык 6-ого класса.

Tsovinar Asratyan
Department of Armenian language name of ak. S. Abrahamyan, senior lecturer
E –mail: tsovinar-asratyan@mail.ru

EXPRESSIVE MEANS AS MEANS ENRICHMENT OF LEXICON

The article deals with expressive (figurative) means which considerably promote the enrichment of a lexicon of the pupil, the development of figurative speech, figurative thinking are considered. From figurative means of expression epithet, metaphor, comparison and the importance of their use in the speech have become the subject of discussion. The latter makes the speech more impressive. Examples and group of words are chosen from the textbook of the 6th class on the native language as pupils of secondary school study expressive (figurative) means in this grade.

Keywords - figurative speech, literature, training, methodology, method, textbook, expressive (figurative) language means, words of explanation, intersubject communication, grammatical knowledge, enrichment of a lexicon, epithet, metaphor, comparison, software material, the mother tongue of 6th class.

Աշակերտի խոսքի զարգացման հարցը մշտապես եղել և մնում է լեզվի մասնագետների ուշադրության կենտրոնում, քանի որ աշակերտի խոսքի զարգացման ելակետը և հիմքը հայոց լեզվի դասընթացն է: Լեզվական գիտելիքներն ուսուցանելուն զուգընթաց՝ ուսուցիչը հավասարաչափ աշխատանք է տանում նաև խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման ուղղությամբ, քանզի միայն լեզվական գիտելիքների իմացությունը դեռ բավական չէ, որ մարդը դիտվի որպես կիրթ, զարգացած ու գրագետ: Հայոց լեզվի դպրոցական դասընթացը, լեզվական գիտելիքների յուրացումը և խոսքի կուլտուրան միահյուսվելով՝ ստեղծում են գեղեցիկ, պատկերավոր, կատարյալ խոսք:

Աշակերտի խոսքի զարգացման,բառապաշարի հարստացման գործում մեծ նշանակություն ունեն նաև պատկերավորման միջոցները: Սույն հոդվածով էլ կփորձենք վեր հանել այն միջոցները, որոնք այս կամ այն չափով նպաստում են աշակերտների բառապաշարի հարստացմանը: Վերջիններս հիմնականում որպես տեսական նյութ աշակերտներին մատուցվում է 6-րդ դասարանում,իսկ դեռևս կրտսեր դպրոցում տրվում են դրանց մասին նախագիտելիքներ, չնայած պետական ծրագրով[1] առանձին ժամ չի հատկացվում մակդիր, փոխաբերություն,

[1] Ուսուցչի ձեռնարկ, Մայրենի 5-6-րդ դասարաններ, Եր., 2011թ.:

համեմատություն թեմաներին: Սկզբում տեսականորեն տրվում է նյութը, այնուհետև հաջորդում են առաջադրանքները: Դասագրքի մի քանի վարժություններով և տեսական նյութով բավարարվելը ճիշտ չի լինի, քանի որ արդեն նշել ենք, որ վերջինիս ուսուցումն ավելի շատ գործնական բնույթ է կրում: Գրականությունից ընտրված վառ ու ցայտուն օրինակներով ուսուցիչը պետք է հիմնավորի տեսական նյութը: Որպես այդպիսին՝ կարող են նպատակին ծառայել անցած և անցնելիք դասերը: Անկախ նրանից, թե ինչ թեմա են անցնում, կամ ինչքանով է դա առնչվում, ասենք, մակդիրին կամ համեմատությանը, պատկերավորման նման միջոցների հանդիպելիս միշտ պետք է կանգ առնել դրանց վրա, տալ ճիշտ ու համոզիչ բացատրություն և պահանջել հաճախ գործածել նման արտահայտություններ: Պարտադիր է նաև աշակերտին հիշեցնել խոսքում պատկերավորման միջոցների կարևորության մասին: Որպեսզի փոքր- ինչ պատկերացում կազմվի այն մասին, թե ինչ նշանակություն ունի մակդիրների, փոխաբերությունների, համեմատությունների կիրառությունը խոսքի մեջ, նախ՝ պետք է մանրակրկիտ բացատրվի դրանց գործածության նպատակը,ապա՝ վերլուծվի որևէ հատված և բացատրվի դրանց կարևորությունը խոսքում: Մենք բնավ այն մտքին չենք,որ 6-րդ դասարանում հանգամանորեն ուսուցանվեն պատկերավորման միջոցները: Բայց այն կարծիքին ենք,որ դրանց իմացությունը նպաստում է պատկերավոր խոսք կազմելուն, ուրեմն՝ ուսուցիչը չպետք է անտեսի այդ կարևոր հանգամանքը: Բնականաբար, ուսուցումը պետք է կազմակերպել՝ հաշվի առնելով 6-րդ դասարանցիների կարողություններն ու ունակությունները: Նշենք, որ գեղարվեստական խոսքում առարկան կամ գործողությունը պատկերավոր ներկայացնելու նպատակով գրողները հաճախ են գործածում հատկանիշ արտահայտող բառեր կամ կապակցություններ, որոնք կոչվում են մակդիրներ: Մակդիրի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ հատկանիշը, այլ նրա գեղարվեստական, պատկերավոր, գեղագիտական բնութագրությունը: Մակդիրների առաջին և հիմնական հատկանիշն այն է, որ նրանք ունեն փոխաբերական իմաստ: Առարկան բնութագրում են ոչ թե սովորական, տարբերակիչ հատկանիշներով, այլ՝ գեղարվեստական, արտահայտչական տեսանկյունից:[1] Մակդիրը միաժամանակ արտահայտում է նաև խոսողի վերաբերմունքն ու գնահատականը: Մակդիրն ամենից առաջ նպաստում է խոսքի պատկերավորությանը, ուստի և այն առավել գործածական է գեղարվեստական ոճում:

Բերենք Ավ.Իսահակյանի «Արագածին» բանաստեղծությունից մի քառատող.

Դու, Արագած, *ալմաստ* վահան,
Կայծակեղեն թրերի,
Գագաթներդ բյուրեղ վրան
Թափառական ամպերի:(1,125)

Կամ՝ Հ.Սահյանի «Ուր որ նայում եմ» բանաստեղծությունից.

Ուր որ նայում եմ, քարե բարձունք է,
Քարե արցունք է, *քարե ժպիտ*,
Քարե սարսուռ է, ու *քարե սունկ* է,
Քարե ծաղկունքի քնքշանք է *բիրտ:(1,189)*

Եթե ուշադրություն դարձնենք ընդգծված մակդրային կապակցություններին, ապա ակնհայտ կդառնա նրանց ոճական, արտահայտչական երանգավորումը:

Արձակ ստեղծագործություններում մակդիրները հաճախ արտահայտում են հեղինակի կամ որևէ կերպարի հոգեվիճակն ու տրամադրությունը:

Սիրում եմ և՛ գարնան *ուրախ* անձրևը, և՛ աշնան *մելամաղձոտ* անձրևը:(1,25)

Աշնան մեղմ արևի մեջ գեղեցիկ էին ծիծեռնակների լուռ բները:(1,55)

6-րդ դասարանի մայրենիի դասագրքից բերենք մակդրային կապակցություններ. մռայլ կեսօր, հինավուրց հուշեր, խելացի լռություն, խորամանկ ժպիտ, խենթ սարսուռ, շառաչուն խավար, հեքիաթական վերջալույս, վառվռուն սարեր, քնքուշ մարմին, ղողանջուն անտառ, անծիր տխրություն, թանձր լռություն, ծանր լսողություն, լուռ բներ, կապույտ տեսիլք, կապույտ աստղեր, զրնգուն տեսիլք:

Փորձենք ներկայացնել, թե նշված օրինակներով ինչպես կարելի է հարստացնել աշակերտի բառապաշարը:

ա. Ընտրել նշված մակդրային կապակցություններից մի քանիսը և կազմել կապակցված խոսք:
բ. Հորինել փոքրիկ պատմություն և նշվածներից մեկը ընտրել վերնագիր:
գ. Կապակցությունները գործածել նախադասությունների մեջ:
դ. Մակդրակիր կապակցությունները դարձնել սովորական բառակապակցություններ:
ե. Ընտրել մի քանի կապակցություններ և բառարանի օգնությամբ մակդիրը փոխարինել հոմանիշով:
զ. Մակդրային կապակցության գերադաս անդամը փոխարինել մեկ ուրիշ բառով:

Համեմատությունը խոսքն ավելի դիպուկ և խոսուն է դարձնում: Այն լեզվի պատկերավորման միջոց է, որի դեպքում որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի պարզ ու տպավորիչ, պատկերավոր դարձնելու նպատակով համադրվում է այդ առարկայի կամ երևույթի հետ:[2] Այսպես՝ Հ. Շիրազի «Հորս հիշատակին» բանաստեղծությունից մի երկտող.

Կգար հայրս Շիրակի հովերի հետ իրիկվա,
Կշողշողար բահն ուսին, *սարից ելնող լուսնի պես:(1,22)*

Կամ՝ Ս.Կապուտիկյան, «Մասիսին մոտիկ».

[1] Լ.Եզեկյան, Ոճագիտության ուղեցույց, էջ 329, Եր., 2007թ.:
[2] Լ.Եզեկյան, Ոճագիտության ուղեցույց, էջ 334, Եր., 2007թ.:

Գույներդ այնքան ջինջ են, նրբերանգ,
Ասես չես նյութված քար ու ավազից:(1,110)

Մ.Մարգարյան, «Հայրենի մեր հող».

Դու մի բուռ, մի ափ,
Դու մի սրտի չափ
Դու սրտի պես լայն,
Դու սրտի պես խոր,
Հայրենի՛ իմ հող:(1,92)

Համեմատությունը, բացի երկու առարկաների միջև եղած ընդհանրությունները մատնանշելուց, միաժամանակ արտահայտում է հեղինակի վերաբերմունքը համեմատվող առարկայի կամ անձնավորության նկատմամբ:

Այսպես՝

Հետո հիշում եմ մի ցանկապատ, որի փշերը *մագիլների նման* բռնել են շորերս:
Մեր հարևանի բարդին բոցավառվում է երկինք հասնող *կրակե սյունի պես:*(1,12)
Նրա ականջին էր հասնում եկեղեցու *տոնական* զանգահարությունը, որը *կարծես թրթռում, խաղում էր օդի մեջ:(1,41)*
Նայում էինք հեքիաթական վերջալույսով վառվռուն սարերին, որոնց վրա մակաղած *հոտերի նման մեղմորեն հանգչում էին ոսկեգեղմ անտառները:(1,194)*

Ներկայացնենք դրանց մեթոդական նշանակությունը՝ բերելով համապատասխան առաջադրանքներ.

ա. Հորինել փոքրիկ հեքիաթ և նկարագրել:
բ. Որևէ ստեղծագործությունից դուրս գրել համեմատության օրինակներ:
գ.Ստեղծել համեմատություններ:

Փոխաբերությունը նույնպես լեզվի պատկերավորման միջոցներից է, որը խոսքին հաղորդում է հուզական – արտահայտչական երանգավորում, ընթերցողի երևակայության մեջ ստեղծում հույզեր, առարկայական, տպավորիչ պատկերներ: Փոխաբերությունը ոչ միայն նպաստում է խոսքի պատկերավորությանը, նկարագրությունը դարձնում ավելի տպավորիչ ու տեսանելի, այլև նրա միջոցով հաճախ բացահայտվում են մարդկային բնավորության որոշակի գծեր, իրավիճակներ ու գործողության տարբեր հանգամանքներ:[1]

Այսպես՝

Արևը հանգչում է հեռվում,
Գետից բարձրանում է մշուշ,
Հեքիաթդ անվերջ օրորում,
Իլիկդ խոսում է անուշ:(1,28)

Կամ՝

Աղբյուրներդ գիշեր ու զօր
Խոսքի բռնված իրար հետ…(1,125)

Կամ՝

Մերթ նժույգի պես բաշդ ցնցում ես,
Սանձդ կրծում ես դու խենթացած,
Մերթ քարերն ի վեր դու մագլցում ես,
Մերթ գալարվում ես քարերից ցած:(1,132)

Կամ՝

Մի *թանձր* լռություն կխտանար շուրջը:[2]
Անտառը կանչում է նրան, ընկերների ազատ վազքն է տեսնում:
Ամպերը եկել թառել էին շենքերի տանիքներին:(1,196)

Բառապաշարի հարստացմանը նպաստող մի քանի առաջադրանքներ.

ա. Հորինել փոքրիկ առակ կամ պատմություն՝ գործածելով փոխաբերություն:
բ. Պահանջել առանձնացրած օրինակներում ցույց տալ փոխաբերությունը:
գ. Որևէ ստեղծագործությունից հանել փոխաբերության օրինակներ:
դ. Հետևելով բերված օրինակներին՝ ինքնուրույն բերել փոխաբերության օրինակներ:

Վերոգրյալների շուրջ ավելի արդյունավետ կլինի աշխատանքը տեքստի վրա: Կարելի է տարբեր տեսակի և բնույթի աշխատանքներ կատարել տեքստի վրա՝ հենվելով պատկերավորման միջոցների վրա:

Աշակերտները կհամոզվեն, որ ընդգծված բառերն առավել արտահայտիչ ու տպավորիչ են դարձնում խոսքը: Այսպիսի բացատրական աշխատանքը երաշխիք է թեմայի հաջող յուրացմանը: Մայրենիի դասաժամերին, լեզվառճական վերլուծություններ կատարելիս, պետք է ուշադրություն դարձնել պատկերավորման միջոցներին: Անհերքելի փաստ է, որ աշակերտի պատկերավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են գեղարվեստական գրականությունից հատվածների մեկնաբանումն ու վերարտադրումը: Եթե աշակերտը յուրաքանչյուր գրական տեքստից սովորի թեկուզ մեկ գեղեցիկ համեմատություն, մակդիր, անգամ բառ, որ դեռ անծանոթ է իրեն, ապա՝ որոշ ժամանակ անց նրա մեջ կկուտակվի որոշակի բառապաշար, կձևավորվի գեղեցիկ,

[1] Լ.Եզեկյան, Ոճագիտության ուղեցույց, էջ 339, Եր., 2007թ.:
[2] Դ.Գյուրջինյան, Թ.Ալեքսանյան, Ա.Գալստյան, Մայրենի 6, էջ 135, Եր.,2016թ.:

պատկերավոր խոսք: Սակայն միայն գրական տեքստի ընթերցումը, մեկնաբանումն ու վերարտադրումը դեռ բավական չեն, նշված նպատակին հասնելու համար, պետք է դրանք անընդհատ կիրառել խոսքում: Նոր նյութի հաղորդման ժամանակ նպատակահարմար կլինի օրինակները բերել հենց իրենց դասագրքի գրական տեքստերից, որոնք արդեն անցնում են կամ դեռ պետք է անցնեն,թեկուզ իրենց ծանոթ, հայտնի ստեղծագործություններից, որտեղ խոսքը հագեցած կլինի պատկերավորման միջոցներով: Նույնը պահանջել և աշակերտներից: Վերջնարդյունքում աշակերտները կկարողանան և՛ գեղեցիկ, հստակ շարադրել իրենց մտքերը, և՛ ունենալ հարուստ, պատկերավոր խոսք, և՛ հնարավորություն՝ թափանցելու գրական երկերը ու ընտրելու տպավորիչ, պատկերավոր խոսք: Այս հարցում, անշուշտ, ուսուցիչն իր ներդրումը պետք է ունենա: Իր ճիշտ ուղղորդումներով և ճիշտ մոտեցմամբ աշակերտներին պետք է օգնի բառերի ճիշտ ընտրության, ինչպես նաև՝ դրանք ճիշտ կապակցելու և խոսք կազմելու հարցում: Աշակերտին պետք է օգնել դուրս գալու սահմանափակումներից, սովորեցնել օգտվելու մեր լեզվի հարուստ բառաֆոնդից:

Ուսուցիչը պետք է պահանջի ստեղծել գեղեցիկ պատկերներ՝ մակդիրների օգնությամբ, համեմատություններ կամ փոխաբերական իմաստ ունեցող արտահայտություններ, որի համար տալիս է թեմատիկ բառախումբ: Որևէ տեքստից (դրանք կարող են լինել չափածո գրվածքներ, փոքրիկ պատմություններ և այլն) դուրս գրել համեմատություններ, բառակապակցություններ՝ կազմված մակդիրներով: Կամ՝ հատուկ տետրում գրառել իրենց հանդիպած ամեն մի գեղեցիկ արտահայտություն: Դասագրքում գործածված գեղեցիկ համեմատությունները,մակդիրները խմբավորել և առաջադրել աշակերտներին՝իրենց շարադրանքում կամ խոսքում օգտագործելու համար: Սակայն միայն նշված աշխատանքները բավական չեն բառապաշարի հարստացման համար, շատ կարևոր է արդեն յուրացրած կամ նորածանոթ բառերի ակտիվացումը: Ուրեմն, պետք է նախ՝ այդ մասին աշակերտներին տեղեկացնել, ապա՝ պարտավորեցնել, որ դրանց գործածությունը խոսքում լինի պարբերաբար: Ի վերջո, աշակերտի գիտակցությանը պետք է հասցնել այն միտքը,որ բառապաշարի աղքատությունը խոսքին տալիս է միապաղաղություն,միօրինակություն:

Բավարարվելով միայն դասագրքի վարժություններով և տնային աշխատանքներով՝ ուսուցիչը երբեք չի հասնի իր առջև ծառացած հարցի լուծմանը: Նպատակահարմար կլինի կազմել որոնողական, ճանաչողական ու ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որն էլ աշակերտներին կմղի ինքնուրույն մտորելու, դատելու, գիտակցաբար աշխատելու, եզրահանգումներ կատարելու: Իրավացի կարծիք է՝ աշակերտի պատկերավոր մտածողությունը ստեղծում է պատկերավոր խոսք:

Գրականություն

1.Դ. Գյուրջինյան,Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Եր.2016թ.:
2. Լ. Եզեկյան,Ոճագիտության ուղեցույց,Եր.,2007թ.:
3. Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան,Հայոց լեզվի ոճաբանություն, Ուսումնական ձեռնարկ ուսուցիչների և ավարտական աշակերտների համար, Եր., 2007թ.:
4. Ուսուցչի ձեռնարկ, Մայրենի 5-6-րդ դասարաններ, Եր., 2011թ.: